

Տիկնայց և արարք.

Ասիկա երրորդն է բանախոսությանց շարքին, որուն ձեռնարկած է Եսայան Սանուց Միութիւնը այնքան պատվավորապես:

Կերևի այս գրական հասկացութիւներու մասին տարբեր ըմբռնումներ կան, հետևարար կուզի՞մ, երբեքս անցնել առաջ, պարզել իմիներս:

Հայ գրողը, մասնավորապես թրքահայը, զրկանքն և դառնութենն զատ ոչինչ տեսած է կենդանությանը, անոր մահն վերջ է, որ դափնիներ և հիացում չի խնայեր մեր հասարակութիւնը. այս պիտի ըլլար մեր գրեւահատության եղանակը: Երբ այսօր մեր գրիչի և մտքի վաստակավորներուն հանդեպ առիթ կուգա հայտնելու մեր գեւահատութիւնը՝ կպահանջվի, որ անպատճառ բուռն քննադատութիւնն ալ մասնակցի հիացման: Ես հակառակ եմ ատոր. մեր գրիչ վարպետներն են, որ հոս խնդրի առարկա կդառնան, արդեն նվիրագործված անուններ, բով է միայն անոնց գործը ներկայացնել հանրության՝ բացատրելով անոր բովանդակ գեղեցկութիւններն ու անծանոթ երակները, մեղմ հպանցումով մը նշմարելի ընկելով ինչ-ինչ թերութիւններ, որոնք քնդարձակ ու լուրջ ուսումնասիրութիւններու մեջ պիտի կրնային արժանավոր տեղ բռնել:

Ահա, ազնիվ ունկնդիրներ, տեսակետս. տառապած անունով ծանոթ, յոյ գործերով՝ ընդհանրապես անծանոթ տաղանդաւի գրողին տալ գոհունակության և լիակատար հրճվանքի օր մը: Աւ ի՞նչ ավելի հարմար քան այս առիթը, որ մեզի այնքան բարչացակամորեն տրված է:

Այսօր երիտասարդ բանաստեղծի մը, Վարուժանին, արդեն իսկ սովոր եղցը պիտի վերլուծվի: Քիչերու տրված է այսպես՝ փոքրա-

Քիվ տարիներու ընթացքին տիրանալ արդար փառքի մը ծաղիկներուն, որովհետև, տիկնայք և տիարք, Վարուժանը բազմակողմանի տաղանդ մըն է: Անոր գործն իր մեջ կընդգրկե անցավորն ու անանցը, միտքը ըզգացման հետ, գեղեցկութիան արվեստը և արվեստին գեղեցկութիւնը:

Սևած Փոքր Հայքին մեջ՝ Վենետիկը կըլլա, Պոլսն հետո, պատանեկան առաջին ներշնչումներուն օրրանը: Վենետիկը, շրանցքներու թագուհին՝ էն ինքնատիպն է Նվրոպայի քաղաքներուն, միսթիքական ու կենսապաշտ քաղաք, ուր եկեղեցական արվեստին առնթիւ կհանգչի հեթանոսականը. հոն են Վերածնունդի վարպետներն Քիցիանոն, Վերոնեզը, Ճիովանի Պելլիսին և ուրիշներ, որոնք քրիստոնեական կտավին քով հեթանոսական Հունաստանի մերկութիւնը կոզեկոչեն:

Հոգի մը զարգացնելու համար ինչքան արվեստ կա այդ քաղաքին մեջ, ու ինչպես կըսես ինքն իսկ, բանաստեղծը, «անկարելի էր պատկերներով չի մտածել հոն»: Եթե այդպես է, ահա առաջին գործը Վարուժանին՝ **ՍԱՐՍՈՒՌՆԵՐԸ**, լույս տեսած 1906-ին:

Բանաստեղծը կընե արվեստի իր ուխտը հոն, առաջին իսկ էջին մեջ, երբ կըսես «Մուսային»...

Քներս, ուղիղ դեպի բարձունքդ վտեմ:
Փնարդ կո՛ւզեն, կո՛ւզեն քնարդ, երկնցուք,
Կորսիե մեչս երգերու սաղմն. կսպասեմ.
Ե՛րբ պիտ տրվի անոր սնուցիչ քո համբույր:

Ծրգե՛լ կո՛ւզեմ, թող սարսոտ բնութիւնն
Մատերուս տակ, ինչպես մոր ծիծն հոլանի՝
Մանկան առչի, բնազդական զրպշելուն,
Եվ կյանքը թող շրթունքիս վրա լուծանի:

ՍԱՐՍՈՒՌՆԵՐԸ պատանեկան ներշնչումներու մեկ արձագանքն է, անոր մեջ կտեսնենք ապագա բանաստեղծին ամեն հատկութիւնները սաղմնային կամ ծլարձակ երևույթով, անշուշտ խառնված երբեմն նույն-իսկ տղայական նյութերու: Ինչ որ այդ գրքին մեջ ամենեն ավելի ուշագրութիւն կգրավե՝ սիրո մի պակասն է: Բայց մի մոռնաք, ազնի՛վ ներկաներ, որ գրեթե վանական մթնոլորտին մեջ կապրեք Վարուժան, և վանական կյանքն աններող է սիրային արտահայտութիւններու:

Սպասել հարկ է պահ մը. բանաստեղծը պիտի ազատե կաշկանդումն. իր դատողութիւնն ու դիտողութիւնը տեր պիտի ըլլա, տեր իր ազատութիւնը, անմիջապես պիտի բացվին աղբյուրներուն ակունքը, ու Յեղի՛ն ՍԻՐՏԸ (1909) պիտի գա՝ ցնցել թրքահայ ազատութիւն առաջին արբշիռ օրերուն մեր հոգին: Հեղինակը արվեստի երկրորդ հրաշագան

Հայրենիքեն է, որ կնվիրե մեզի «Յեղիս սիրտը», պատմական Յլանտրիա-
փ, կակնարկեմ արդի Պելժիքային:

Հոն է որ 17-րդ դարուն ապրեցան Ռուպենսը, Վանտիքը, Ժոռտա-
լենսը և ուրիշներ, բոլորն ալ քրիստոնյա են և Հեթանոս, ու մանավանդ
Հեթանոս, բեղուն, երանգաճոխ ու հանճարային: Ասոնց ազդեցությունն
անվրեպ է Վարուժանի վրա, երբ կտեսնենք զինք դարձած հայ և օտար
հեթանոսական օրերուն և աստվածներուն, երբ կտեսնենք զինք քիչ վերջ՝
անոնց շափ մերկ, ճոխ, գունազեղ:

Բայց նախքան հեթանոսության դարձ մը՝ Վարուժան հայրենասեր
մըն է: ՅԾՂԻՆ ՍԻՐՏԸ տառապանքն է մեր տառապանքին, եղբայրներու
արյունովը կարյունի իր հոգին:

Թշվառ սերունդի մը կպատկանինք, ազնիվ ունկնդիրներ, և մեր
ապերախտ կյանքը չի կրնար շանդրադառնալ մեր շատ զգայուն գրողնե-
րուն գործին մեջ: Գիտեք, Արովյանը այդ դարդով կհչուծի ու զայն կան-
մահացնե «Վերքին» մեջ, նույնպես ավելի կամ նվազ նույն տխրու-
թյուններն ունին Պատկանյան, Բաֆֆի, Սիամանթո, Եսայան,
Ա. Թեոդիկ, Պարթևյան և Վարուժան, և այլն. ասոնց յուրաքանչյուրին
գործը կամ մաս մը այդ գործեն համայնատարած մեր ողբերգության
մեկ փուլը կբովանդակե:

Վարուժան կանգնած օտար երկրի վրա իր պանդուխտի կարոտով չի
հոգին հայ արյունազանդ հողին վրա կպտտցնե՝ աղետը երգելով: Զարդը,
Կիլիկյան մոխիրներուն, Սով, Մաբած օճախ, Առևանգիչ, Հովիվը
և ուրիշներ մեր ճակատագիրը շեն: Տառապանքի և հույսի այդ երգին մեջ
Վարուժան Սիամանթոն կտարրերի հաճախ մանրամասնությանց նկա-
րումովը: Մինչ Սիամանթո համադրված և սեմպոլիք տողերու մեջ ուրույն
պատկերներ կստեղծե, Վարուժան կնկարե զիրք մը. մեկը մեր երևակա-
յության կխոսի իր արվային տեսիլներու խումբերով, մյուս որոշ
զծագրություններ կհորինե մեր աչքին: Վարուժանի տողերը գրեթե միշտ
որոշ նյութի մը էությունը կազմող մասերն են, մինչ Սիամանթոյի տողերը
երաժշտության մը տպավորությունները կբերեն, չէ թե անոր ձայնական
առումով, հապա այդ ձայներուն՝ մեր մեջ արթնցուցած պատկերներու
չփոթ, այլ հոյակապ մեծությամբ, երկուքն ալ գեղեցիկ են, այլ հոս Սիա-
մանթոն կշահի՝ ինձ համար:

Վարուժանի ԿԻՂԻԿՅԱՆ ՄՈՒԽԻՐՆԵՐՈՒՆ քերթված են.

Բոցը կանցնի, ու քամին դալով անոր ետեն

Խանձած սեզերը առած սարերն վեր կմբրկե.

Թ՛վ գողահար մերկութուն խլուրդներու խողերսն,

Որոնք նրման ոգնի՛ արտերուն մեջ կհայտնվին,
Ո՛վ ավերակը բլրան վրա շինված հյուղերուն,
Ուրկե կելլեր հայ գեղջուկն առաջնայան ազոթոմ
Արարչությունը հողին արբեցնելու բահին տակ:

Շուշն ոտանավորեն.

Կրսայրյացեծրը անդին խավարին մեջ կըհեծեն.
Բայց վիրավոր մ'ավասիկ կսքողվի մութին մեջ,
Հետո ծունկին վրա ընդթարչ կըմտենա խուժանին
Եվ հեգնորեն, քրքշալիք, արշունատղիք կըթքնեն
Նարուկին մեջ տոնական:

Վարուժան կերգե աղետին հետ դյուցազուններն ալ, որոնք անոր դեմ
կստոխին, հետո կերազե իր հայրենի օճախը, ու ներկայեն հուսահատ՝
կանդրադառնա լուսավոր անցյալին, կոզեկոչե Անին, կոզեկոչե հեթանոս
դարերու կյանքն ու աստվածերուն ուժը:

Ահա տողեր Աննիեն».

Արդ քարուքանդ կըհանգչիս,
Եվ նշխարներդ ինչ դար է, որ կապրին,
Ժամանակի ձեռքը շեղավ այնքան հաղթ՝
Անյուններդ այդ մրրիկներուն հանձնելու.
Սմբատի սոս նժույզը չի խրխնջեր,
Ան չի թոթվեր արշունթաթախ բաշերն իր.
Քած ձիուն դեմ Ափշինի,
Ու կոչնակներն ու շեփորներն ոսկեցու,
Որոնց ի լուր թուրը խաշով կըմուլվեր,
Հոն լուծ են՝ ապրեցնելով իրենց տեղ
Թուի հազար սերունդներ:
Արդ լուսթյան շղջիկի լայն թևին տակ
Կանի եղին արտասուքովն աստղերուն.
Եվ հոն բաղեղն հայրենասեր թևերով
Կգրկե հողդ տրտում
Իր պատատիչ կայծքարերով միասին:

Լեոքարտիի ԱՌ ԻՏԱԼԻԱՆ Վարուժանի ԱՆԻԾՆ գեղեցիկ շէ

Ըսի թե ներկայեն հուսակտուր դեպի անցյալ կդառնա իր հողին, ու իր
արդեն իսկ հեթանոսական հոգվույն մեջ, Ֆլաման պերճ արվեստին ազդե-
ցությամբ՝ կերկնվին հնության աստվածությունները: Եվ որպեսպի ՑԾՂԻՆ
ՍԻՐՏՆ իսկապես հաշ տառապանքին սիրտն ըլլա, Վարուժան անոնց ուժը
կադերսե, անոնց բազուկները հաղթ՝ արդի մուսյր ուժերուն, արդի վայրագ
պլանդներուն դեմ:

Ուժին համար, կրոնքին համար բազուկիդ,
 Որով դու որ մը պատուեցիր բերածենի
 Վիշապներու, երկնքի մեջ սփռեցիր.
 Տեղոյ արևու հունաճոք՝ առազերն Հարգազուգին.
 Ուժին համար, որ թռչն է և հողին
 Արարչութիւն անվախեան.
 Որուն անհուն համբույրին տակ կծնի
 Աշխարհներն մաս մը ծաղիկ, մաս մը բոց,
 Կապոյ սկզբունքն ինձահասկան հյուսելն մեջ
 Եվ քղեղին, և կամքին,
 Որուն հզոր մատին տակ
 Կըճեղքւնքին սերմերն՝ ավիշն երգելով
 Կաղնիներուն մինչև դադաթը կելլի.
 Ուժին համար, որ կլեցնե ստիկերներ,
 Կօրորեն մեր արբանե ու մեզ՝ մահնն վերջ,
 Մինչև առաջերը կտանի ու մինչև
 Երկրորդ կյանքի մ'արարչագործ պատճառին,
 Որ կկանգնի ազգ մ'ինչպես խումբ մ'առչուծի,
 Բազուկդ անոր բազուկին մեջ կըհեղու,
 Ծի գերդ հրեղեն վարագաճով՝ իր լուսեղ
 Թռիչներու ամփոփման տակ կըթխե
 Մեր մայրերուն ծոցին մեջ
 Գլուցազուկներ, հանճարներ,
 Այգ սուրբ ուժին համար կրտսմ, որուն դու
 Իմացական աղբերակն ես հորդահոս,
 Ո՞վ դու, Վահագն, ահա քեզի կարկուտած
 Բազուկներս իմ արշունոտ
 Կազոթիմ ես... կաղոթեմ...

ՅԵՂԻՆ ՍԻՐՏԸ թեև մեծապես նվիրված հայտաապանքին, սակայն
 իր մեջ կպարունակե հետզհետե ընդհանրանալու սաղմերը, բանաստեղծը
 հանգստի կարճ միջոցի մը պես որ ունի ազատվելու համար անձուկեն,
 սահմանափակեն, իր ետք խառնելու համար ընդհանուրին ու նաև՝ տիե-
 ղերականին:

Սակայն քանի՞ շքնաղ էջեր են Յեղին սիրտին մեջ՝ Շովիվը, Վահագեր,
 Կաբուսի համակը, Հաղթողը, Անին, Կիլիկյան մոխիրներուն և տակավին
 ուրիշներ, զորս հիշել չեմ կրնար և որոնց մեջ տեղ-տեղ պզտիկ հոնտորա-
 կան ավյուն մը կգեղերի:

Ըսի թե, տիկնայք և տխարք, բանաստեղծը կարճ հանգիստի մը

կկարտաի՝ զատվելու համար «Յեղիև սիրտեն»։ Օսմանյան ազատությունը կրեի այդ դադարը. պահ մը սիրտերը միամիտ պատրանքը կունենան բռնական օրերու անդարձ կորուստին, բանաստեղծը ինքզինց ազատ կզգա, որովհետև կկարծե նաև ազատ իր ցեղը, ու ահա ՀՆԹԱՆՈՍ ԵՐԳԵՐԸ կերևան։

Գեղեցկության պաշտամունքը բնատուրմիկ և օտար աստվածներու և ուճիներու մեջ կերգվի հոն, կերգվի տարփական սիրը, կերգվի ճարտարական կեդրոններու և մեր հեզ, գավառիկ աշխատավորին ցավը ու հուսահատությունն ալ կհառնե իր սևագես գլուխը...

Հնության վերբերումը հոս այլևս ազգային զգացման մաս չի կազմիր հապա տարփական զգացումի մը, որ անոր էությունը կկազմե հաճախ Հեթանոս դարերուն մեջ իգական ձևը պաշտվեցավ, գինին ոգևորեց ձևին գեղեցկությունը. Վարուժան անդրադառնալով անոնց մեջ՝ այդպես կընե ու վանկի, բառի, ձայնի, հետևարար և պատկերի միջոցով կցայտեցնե այն բոլորը, ինչ որ երանգի, դիրքի և շարժումի հավիտենական ձևվերուն միջոցով կտավներու վրա անմահացուցին Ռյուպենս և Ժոտայենս։ Ոմանք տոփական և խիստ իրապաշտ կգտնեն զինք այդ նկարներուն մեջ. Երվանդադե «Ո՛վ Լալազեի» հեղինակը մի ոմն Վարուժան կկոչե և կհայհոյե իսկ քերթողին. ես այդքան բարոյախոս պիտի չըլլամ։ Իրավ է, որ կրնար Վարուժան Ո, ՏԱԼԻԹԱՆ կամ ուրիշ մը զեղչել իր գիրքեն, բայց, ըսեք, խնդրեմ, ո՛վ պիտի ժպրհեր կշտամքել հեղինակը, երբ ան բառի, այսինքն ձայնի միջոցով ուզեր է արտահայտել այն բոլորը, որոնք գույնի և մարմարին ձևի տակ Եվրոպայեն մուսեոնները կլեցնեն։

Եվ հետո Վարուժան այնքան խորապես կմտնե նյութերուն և զգացմանց մեջ, որ ամենեն մերկ ձևերը կսրբանան իմ աչքիս. ինչ հոյակապ քերթված այդ ՈՎ ԼԱԼԱԳԵՆ։ Ահա փոքր մաս մը.

Արդ հիշեցի՞ր դու այն օրն, ո՛վ Լալազե,
Ակոսներուն և կողերուդ ընդմեջեն,
Այն ծանր ամիսն հղությանդ,
Կանցներ ալիքն հողին հորդոզ ույժերուն։
Արեգակի արյունին նուռն էր ծոցիդ
Մեջ հասունցած։ Բուներն ի վար ծառերուն՝
Կրծորեին շիթ առ շիթ
Հույզերը, նման արցունքի
Քու համբուրված մարմինիդ պես ծանրակիր
Հողն էր թրշված, էր կաշուն
Փաղցուներով ու մեղրով։
Անուշաբույր իր բեռին տակ կկքեր
Գեղձենին՝ քեզ նրմանակ

Քո ժիճերուց և մանածկ
Ողիւյզներն այն լեցուն էին ապագա
Միժաղներով, ցնծութիւնով և կայսթով...

Այսպէս կշարունակվի: Մինչև հողը կուտի ծնելու երկունքով, մինչ այգիները կկթվին, ու հնձաններու մեջ կթված խաղողը արբշիռ կընե այգորդը, մինչ ծառերը՝ ծանրաբեռն պտղով՝ իրենց ճյուղերը կերկարեն ամենուն. այդ հոյակապ ծննդական երկունքին առջև մարդը կուզե ուռճացնել իրեն հպող ամեն բան ու գերագույն համբույրի մը մեջ անէանալ: Ասիկա բնութիւն համաստվածութեանը հետ նույնացում մը չէ՞, չէ՞ հանճարային թռիչք մը դեպի բնութիւն ստեղծագործ հանճարը:

Հնութիւնն ալ կոզեկոշե, ըսի, այսպէս՝ Վանատուր, Հերանոսական, Անահիտ, Սաղաւոնական, Մեռած աստվածներուն, Գինարբուսէն վերջ և այլն:

Վարուժանի քնարը հարուստ է այլազան ձևով և խորքով: Գեղեցկութեան և տառապանքի բալոր կարելի աղբյուրներէն կըմպե ան ՀԵԹԱՆՈՍ ԵՐԳԵՐՈՒՆ մեջ: Կյանքն ու երազը հոն են: Անոնց մեջ կմտնե, կմխրճի հեղինակը կամ ավելի ճիշտ, ազնիվ ունկնդիրներ, իր մեջն են, հարուստ, անօրինակ ժառանգութեամբ մը տիրացած է անոնց, ու արտաքին ամեն տեսիլ կուզա այս մեծատաղանդ, հանճարեղ հոգվույն մեջ արթնցնել բազմազան երեսակներն ու թաքուն ակերը իր կարելիութեանց: Ըստ իս հանճարին բացատրութիւնն է այս:

Եթե տարիական է Վարուժան, հոյակապորեն հայրագործով ալ է: Կարդացեք «Ողջույն քեզ, Մարիամը» ու լսեցեք նաև զգացման սա քրեքույշ արտահայտութիւնը «Վարուժնակիս» մեջ.

Աղվոր, աղվոր, աղվոր վարդն իմ Գարունիս,
Որ սրտիս վրա բացվեցար
Եվ քեզի հետ բացիր հոգիս վշտահեղձ
Նոր երազի մը պայծառ:

Նույն քերթվածին մեջ.

Քու ձեռքդ լսե՛ գեռ կրօնե զիս կանգուն
Ավազներուն վրա փառքիս
Եվ մազիդ մեկ թելը բավ է կապելու
Տիեզերքին հետ հոգիս:

Կամ.

Ձի ես անդունդն եմ, սր կըլլա երջանիկ
Փռուռային մը լույսով.
Անապատն եմ, սր երկինքին կծպտի
Իր ծլարձակ մեկ բույսով:

Տառապանքը, մանավանդ ուրիշներունը, որոնք անխղճորեն կշահա-
 գործվին, իր սրտին մեջ կարեկցութիւն քանի՞ բովեր կրանա. կարդացե՛ք
 «Առկայծ ճրագ-ը», «Բանվորուհին», «Ընկեցիկը», «Մեռնող բանվոր-ը»,
 «Խարված կույսեր-ը», «Մեքենաները», «Ճիվաղը կանցնի-ն» և այլև
 Ահա նմուշ մը «Բանվորուհին».

Եվ կխորհիմ, թե քնատ ես և նոթի,
 Իրանդ հողմեն կըդողա
 Եվ կնստի գանգուրներուդ վրա, քո՛ւյր,
 Եղլամն իբրև շափուլդա.
 Եվ կխորհիմ և խենթի պես կբազձամ
 Վար իջնել, քույր դայկադեմ,
 Քովդ իջնել, համբուրել ձեռքդ նիհար
 Եվ հծծել. «Քեզ կսիրեմ»...

Հուսահատութիւնն ալ այնքան խորն է իր մեջ, որքան մյուս ըզ-
 րացումները, իր անհույս տողերուն մեջ կեորարտին և Եղիան կհիշեցնի,
 ու պահ մը այնպես կթվի, թե իր սուգն ալ, ինչպես իր թախիժը, անոն-
 ցինին նման ծննդական է. ՏՐՏՈՂԱՉՔԸ և ԼՔՈՒՄԸ կուտան մեզի ծանո-
 թութիւնը աչդ հուսահատութիւն. «Լքումեն» քանի մը տող.

Ոչ ոք. ոչ ոք գիտե վիշակ,
 Որ թոցերուս մեջ զերդ խաշխաշ թունարեք
 Արագորեն կուռնանա.
 Ոչ ոք գիտե, թե ի՞նչ կերպ
 Հուսահատութիւնն որի որ գիտ մահձան հետ
 Կրնանելացնե, թե կերթամ ինչ ճամբաչով
 Կյանքիս մոխիրն ևս իմ արիւն մեջ կըռել...

Եվ.

Այսպես խաղաղ իրիկուն մ'երբ տեազին մեջ
 Մայրս կերգե զբազած
 Մահվան սաստիկ ծարավեն՝
 Զըզնելով ուշ եզերքիդ բաղեղին,
 Որ գթութիւնս պիտի կառչի քզանցքիս,
 Պիտի նետեմ մարմինս աչս խոնջ, կարեվեր
 Խորհուրդիդ մեջ...

Հեթանոս երգերուն... ինչպես նախորդ գործերուն մեջ, վարուժան
 հզորապես բնութիւն զգացողութիւնս լեցված հոգին մըն է: Քիչ կան էջեր,
 ուր բնութիւնը իր շքեղ ամբողջութենէն մաս մը դրած շՐՐԱ բանա-
 ստեղծին գրչին տակ ու կամ չի ծառայի իբր մտածումը կամ զգացումը
 լուսավորող սիմպոլ մը: Ասիկա ազգային հատկանիշ մըն է էապես. դի-

տեղեք, տիկնայք և տիարք, մեր ժողովրդական բանահյուսութիւնը, որով կարբենանք քանի մը տարիե ի վեր շնորհիվ այն տաղանդաշատ հայուն, որ հոս ներկա է, նույնիսկ մեր դասական նախնայաց գործերը ձեռք առեք, անոնց մեջ տեսնելու համար այն, ինչ որ Վարուժանի մեջ կա: Մեր ժողովրդական քերթութեան մեջ մանավանդ, գրեթե չիկա տող մը, որ սիրո կամ այն զգացմանց բնական նմանութիւն մը շքնդիւստնովի, ուրեմն ինչ որ կրնար թերութիւն համարվիլ Վարուժանի համար, իբր ծանրացնող իր ոճը՝ ցեղային հատկանիշ մըն է:

Միայն երբ շատ տեղ իրապաշտորեն նկարագրական է բանաստեղծի՞ն ոճը՝ հոն հոծութիւն մը առաջ կուգա, ոմանք զայն հակառակ կգտնեն քերթութեան ոգւոյն, այն համոզմամբ, թե բանաստեղծութիւնը պետք է ըլլա, եթէ դյուցազնական կամ պատմական չէ, իրերու և զգացման մեկ ցուրը. չէ թե անոնց իսկական նկարը: Միայն չէ՞ այս դիտողութիւնը: Բայց անմիջապէս ավելցնեմ, որ Վարուժանին գործերուն մեջ եթէ մեծ է նկարագրական երակը, փոքր չէ համապարական ոգւով և գույնով էջերուն թիվը:

Գալով Վարուժանին արվեստին «Մարտունեքու» փոքր թարթափուն՝ մեն վերջ «Յեզին սրտին» մեջ գրեթե տիրացած է անոր, իսկ «Հեթանոս երգերուն» մեջ արդեն իսկ տիրն է: Հավասարապէս ոտանավորի ամեն ձև իր այլազան մտածմանց իբր հագուստ կնոնեն ու մանավանդ իր լեզվին մեջն է այդ արվեստը: Գրագետ բարեկամներես մին կըսեր անցյալ օր. «Կարծե հայերեն լեզուն սորվիլ Վարուժան կարդալու համար»: Վարուժան երանգի, շարժման ու հաճախ ներդաշնակութեան բանաստեղծն է: Ան չի գոհանար աշխարհաբարին բառամթերքի աղքատութեամբ, դասական մատենագրութիւնեն կբաղե բառերու ամբողջ հույլ մը՝ ճոխերանգ պսպղուն, կարծես Հեփեսոսոսի ձուլարանեն նոր հանված դրահներու քիչ մը վայրի վայելչութեամբ: Իրավունք ունի Վարուժան, կարելի չէ մերժել անցյալի գեղեցկութիւնները, ու մանավանդ իրեն նման հոգի մը՝ արտահայտութեան նորանոր միջոցներու կկարօտի: Վարուժան ինչպե՞ս նկարագրեր ասպետական դարերու այն շքեղ ՀԱՐՃԸ, եթէ Արսեն Բագրատունիի «Իլիականեն» կամ «Հայկ դյուցազնեն» շքնարեր ազնվագգի բառերու մթերք մը: Բագրատունիի, Հյուրմիզի, Ալիշանի լեզվին ազդեցութիւնը անվրեպ է Վարուժանի լեզվին վրա: Վարուժանի արվեստին մաս կկազմե իր հմտութիւնը. հեթանոսական կամ այլ կյանքի ներշնչումներուն մեջ շեշտված գիտութիւն մը կա հին բարբերու, սարվածքի, տեղական գույներու, ասոնցմով մանավանդ իր գործերուն մեջ տիրող իրապաշտութիւնն ալ կզորանա, թեև չի գաղբիր փոխնիփոխ խորհրդապաշտ և նույնիսկ ոտմանթիք ալ ըլլալի: Կրացնելու համար: Վարուժան տակավին քսաներթ

ձմեռներու գարունն է ողջունած և արդեն անմահության դափնիները
կկրե. բանաստեղծ մը շապրիր իր մեջ, հապա բանաստեղծներ կապրին. իր
ներկա գործը որքան հոյակապ, տակա՛վին նախարանն է անոնց, որոնք
պիտի դան հայ գրականության փառքերեն ըլլալ: Ի՞նչ պիտի կոչվին ան-
ոնք. անշուշտ «Հացին երգը», թերևս հոմերական մեծ դյուցազններգու-
թյուն կամ թախծալից և վսեմ սաղմոսները մշտահոլով կյանքին:

Իր արվեստը ձգտումը չի ճանչնար, որովհետև տիեզերանալ կձգտի,
և լավ է, որ այդպես ալ շարունակե՛ հակառակ բաղձանքներու և քն-
նադատությանց. և հիշտ կըսե ինք «Մատչանն ահա-ին» մեջ.

Խորհե թե միշտ քննադատն է միաշյա,
Եվ ներքին բարոյագետը խոհեմ.
Տառապած սիրտն օ՛վ պիտի կշռել կարենա
Նըծարին մեջ՝ տիեզերքին դեմ առ դեմ:

Ան լոկ կըրեա ճանչնալ երազը սրարբած
Ով կարրենա կյանքի դիրտովն ու խունկով,
Ան որ մարդն է՝ լույսով, ցեխով թրծված,
Ան որ մարդն է՝ սրբագործված արցունքով: